

ՆԱԲԱՆԴՅԱՆԻ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

ԹՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՐՈՐՑԱՆՑ, Այս ստորագրությամբ «Հյուսիսափայլի» 1861 թ. 6-րդ և 9-րդ համարներում տպագրվել է երկու հոդված: Առաջին հոդվածին նախորդել է Նազարյանի «Հայտարարությունը»՝ Մոսկվայում «Մասնավոր գիտնական և գործական դպրոց» բացելու իր մտադրության մասին: Մեր կարծիքով Նազարյանի հայտարարությունը և Թյուքյունչի Հակոբի հոդվածը կապված են միմյանց հետ և լրացնում են իրար:

Թյուքյունչի Հակոբի հոդվածին կցված է նաև մուտքի նամակ՝ ուղղված «Հյուսիսափայլի» խմբագրին: Այս նամակը բացառապես նվիրված է Նազարյանի մասնավոր դպրոցի ծրագրի մեկնարկներին և դրա պաշտպանությանը: Պետք է ենթադրել, որ «Հայտարարություն» հրապարակումից հետո անբարյացակամ կարծիքներ են հայտնվել դպրոցի հիմնադրման նպատակահարմարության և այն մասին, թե ինչու Նազարյանը, որ մինչ այդ մեծ եռանդով պրոպագանդում էր ազգային դպրոց ստեղծելու անհրաժեշտությունը, հանկարծ վճռել է մասնավոր դպրոց բացել:

Թյուքյունչի Հակոբն իր նամակում հիմնավորում է Նազարյանի նախաձեռնության կարեւորությունը և անհրաժեշտ բացատրություններ տալիս ազգային և մասնավոր դպրոցների վերաբերյալ: Բազմապիսի անստիճանականություններով նա փորձում է ապացուցել, որ ազգային դպրոցը, որքան էլ գեղեցիկ զաղափար է, «այս բուպիս անհասանելի բան է մեզ», մինչդեռ մասնավոր դպրոցը՝ «իմ և ամենայն բարեմիտ հայի կարծիքով արժանի է ամենայն օգնականության և ձեռնօրհնության ազգի կողմից»²: Ահա խմբագրին ուղղված՝ Թյուքյունչի Հակոբի, նամակի հիմնական ֆակտական: Միանգամայն պարզ է, որ Ստ. Նազարյանին այդ պահին հարկավոր էր «յաշտպանել մասնավոր դպրոց հաստատելու իր ծրագիրը և հասարակական կարծիք ստեղծել դրա շուրջը»:

Նամակին կից ծավալուն հոդվածը, սակայն, որը կրում էր «Խոսակցություն զանազան տեղերից եկավոր հայերի մեջ, մի ծանոթի սենեկում» խորագիրը, նվիրված է հայ հասարակական կյանքի առաջնության մի շարք հարցերի քննությանը, որոնք պարբերաբար արծարծվել են Նազարյանի այլևայլ հոդվածներում:

Նամակը և «Խոսակցությունը...» կրում էին Նազարյանի բարեկամ Հակոբ Սերոբյանցի ստորագրությունը: Իր մենավայելության և մեկուսացման այդ օրերին, երբ Նազարյանի հակառակորդները «Հյուսիսափայլն» առել էին կրակի օղակի մեջ և այն դադարեցնել տալու համար առնում էին ամեն ինչ, Նազարյանին անհրաժեշտ էին նոր թղթակիցներ, բայց անձինք՝ իրական, հավաստի անուններով: Բանն այն էր, որ, մինչ այդ, «Հյուսիսափայլի» 1860 թ. 12-րդ և 1861 թ. 3-րդ համարներում Պողոտ Ղալապյանց և Հակոբ Ալիշանյանց ծածկանուններով տպագրված հոդվածները մեծ աղմուկ էին առաջացրել հակառակորդների բանակում: Պետք էր Նազարյանի պաշտպանական հոդվածների թիվն ավելացնել, բայց՝ «կոնդանի անուններին» միջոցով, ուստի և ստեղծվում են Նազարյանի բարեկամներ Սադա Ալեքսանդրյանցի և Հակոբ Սերոբյանցի ստորագրությունները կրող նամակ-հոդվածները:

Հակոբ Սերոբյանցը թիֆլիսցի հայ մտավորական էր և Մոսկվայում ազատ մուտք ուներ Նազարյանի բնակարանը, ինչպես նրա մի քանի մտերիմները: Ավելի ուշ, Նազարյանի Թիֆլիսում գտնվելու տարիներին, Սերոբյանցը նրա ընտանիքի ամենամոտ և հավատարիմ բարեկամներից էր: «Հյուսիսափայլում» տպագրվելիք հոդվածների համար իբրև հեղինակ ընտրելով նրա անունը, որը շեր կարող կասկած հարուցել հեղինակի ինքնության վերաբերյալ, Նազարյանը, իրեն ժողովրդական հնարան, այդ անվանն ավելացնում է «Թյուքյունչի» մակդիրը: Մենք նույնպես կարծում ենք, որ այն ընտրված է ժամանակին ճանաչված ռուս ժողովրդական

* Հոդվածի սկիզբը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 3:

1 «Հյուսիսափայլ», 1861, № 3, էջ 251—259:

2 Նույն տեղում, № 6, էջ 485:

Սենկոպսկու ծածկանուններին, ինչ վերաբերում է Ս. Դարոնյանի այն կարծիքին, թե այդ անունըն արդեն Նալբանդյանն օգտագործել էր իր առաջին վիպակում, ապա նախ, այն՝ հեղինակի կամքով լույս չէր տեսել, իսկ եթե անգամ հրատարակված լիներ, հազիվ թե Նազարյանին արգելվեր օգտվելու Սենկոպսկու ծածկանունից:

«Խոսակցություն...» հոդվածը Նալբանդյանի բացակայության շրջանում տպագրված թերեւս ամենանշանակալից ելույթն էր՝ հարցադրումների նպատակալացությամբ և դրանց քննության բազմակողմանիությամբ: «Խոսակցություն...» հեղինակը նպատակ էր դրել, հետեւելով եվրոպական գիտությունը, «լույսի տակ» քննել ե մերկացնել «ազգի ծածուկ ու թաքուն ցավերը»: իսկ դրանք շատ էին: Հոդվածում նշվում է, որ հայերի մեծ մասը ղուրկ է ազգային ինքնաձանաթյունից: Նրանք ապրում են հարստություն կուտակելու մտահոգությամբ միայն, չեն կարողում, թերթերին չեն բաժանորդագրվում, չեն մտածում ազգային դպրոցներ հիմնադրելու մասին: Ամենայն սրությամբ բարձրացվում է սոցիալական քննից հայերին բարձրացնելու, նրանց մեջ բանական արարածի արժանապատվության զգացումն արթնացնելու խնդիրը:

Ձրույցի մասնակիցներից Բարադամը, որ առավել լուսավորված մի անձնավորություն է և հեղինակային խոսքի կրողը, պարզաբանում է հայ հասարակական կյանքում առկա մտահոգիչ դրույթները և մատնանշում փրկության ուղիները: Դրանք էին՝ մանուկ սերնդի կրթության կազմակերպման հարցը, գրականության և մամուլի նկատմամբ սեր արթնացնելու պահանջը, եվրոպական քաղաքակրթությանը հետեւելու անհրաժեշտությունը: Բարադամը նորանոր խնդիրներ է առաջադրում իր ընթերցողներին: Նա վկայակոչելով արեւմտահայերի ձեռք բերած Ազգային սահմանադրությունը (որի օգնությամբ իրենց «խելացի եղբայրները» արդեն փոխել էին հին օրերի կարծ ու կանոնը), խորհուրդ է տալիս հետեւել նրանց օրինակին: Այսպես, նա առաջադրում է տարրեր գավառներից փոխանորդներ ընտրել, որոնք, հավաքվելով մի կենտրոնական քաղաքում (օրինակ անգրկովկասցիք՝ Թիֆլիսում), զբաղվեն ազգային կյանքի անհետաձգելի հարցերով, մի արծաթազուլիս գոյացնեն, որով կարող էր ազգային մի ընդհանուր վարժատուն պահպանվել և այլն:

Իլյուսթրանշի Հակոբի հոդվածը, որ Սա. Նազարյանի լուսավորական հայացքների հանրագումարն է, չէր կարող գրված լինել Միքայել Նալբանդյանի կողմից: Նախ՝ ժամանակի առումով: Հոդվածը գրվել է 1861 թ. մարտին և տպագրվել հունիսին, երբ Մ. Նալբանդյանը գտնվում էր Եվրոպայում, այնուհետեւ՝ Հնդկաստանում: Այդ օրերին, մարտի 29-ի թվակիր իր նամակում Ստ. Նազարյանը գրում է. «Նալբանդյանը այս բոպեիս լոնդոնումն է. ոչինչ լուր չունեմ նորանից և ոչինչ գործակցություն չէլուսիսափայլին»³:

Ասես պատասխանելով նրան, հունիսի 26-ի թվակիր նամակով Նալբանդյանը Կալկաթայից դիմում է Անանիա Սուլթանյանին. «...Ամենեւին ձեռնհաս չեմ չէլուսիսափայլի» համար աշխատելու Եղանակը, դատաստանական զբաղմունքը, պանդխտության դժնդակ ծանրությունը խլում են ինձնից իմ վերջին հնարները: Բայց դու աշխատիր գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանելու ինչնիցն այդ օրագիրը մեր թախքմի օրգանն է:

Հուլյս ունիմ, որ շուտով կկատարես խնդիրքս: Նազարյանը կարբադրե այն շնչին թերությունը, որ պիտի լինին քո գրվածքում⁴: Չհավատալու հիմք չկա: Բայց, եթե, այնուամենայնիվ, ենթադրենք, թե ինչ-որ հնարքով Նալբանդյանը Փարիզ—Լոնդոն—Փարիզ ուղերթների միջոցին անընգմեջ լրատվություն ունեւ Մոսկվայից և այս հոդվածը «Երկու տողի» հետ միաժամանակ շարագրում և ուղարկում է Նազարյանին (ինչպիսի համոզմունք հայտնում է Ս. Դարոնյանը), ապա մենք մեղանշած կլինենք պատմական ճշմարտության դեմ:

Նալբանդյանը չէր կարող գրել այս հոդվածը այն պարզ պատճառով, որ այն մերժում էր հայերի ազգային-քաղաքական ինքնորոշման գաղափարը, Այսպես, «Խոսակցություն...» հոդվածում զրուցակիցներից մեկը («Մի այլ ոք») այն միտքն է հայտնում, թե հայը՝ «իրեւար կուտե, եթե իշխանության թագ ստացավ»: Հոդվածագիրը Բարադամի միջոցով պատասխանում է. «Ոչ ոք հայերի խելացիներից թագավորության վերա չէ մտածում. հայոց ազգի այժմյան գրութենից մինչև իշխանության թագը մի այնպիսի լայն և արձակ անդունդներով լցված ճանապարհ է, որ այս բոպեիս հանդուգն և անօգուտ էր մտքից ևս անցուցանել մի այդպիսի բան: Մի անուս, անկիրթ, տկար և ցանուցիր, անմիաբան ազգի եթե թագավորություն ևս բաշխեր (որ անկարելի

³ Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 242:

⁴ Մ. Նալբանդյան, Ելժ, հ. 5, Երևան, 1984, էջ 144:

բան 1), իհնչ զորութիւնը պիտո է նա պահպանեն զորան: Ո՛ր, սիրելի եղբարք, հայոց բարեմիտքը չկամին այս ռոպէիս թագավորութիւն հայերի համար, այլ միայն մի փոքր դաստիարակութիւն և կրթութիւն, մի փոքր գիտութիւն և լուսավորութիւն, որով կարող էր մեղմանալ հայոց վայրենաբարոյութիւնը և նոցա կյանքը ստանալ մի փոքր մարդավայել և մխիթարական կերպարանք⁵: Այս հարցադրումը կրում է նազարյան-լուսավորչի հայացքների կնիքը և բուրժուական լիբերալիզմի ցայտուն արտահայտութիւններից է⁶: Հայերի ինքնուրույն թագավորութիւն պահելու անկարողութիւն միտքը նազարյանը հայտնել է նաև Նալբանդյանին ուղղած 1865 թ. սեպտեմբերի 25-ի թվակիր նամակում՝ Կատկովի զրպարտչական հոգովածների առիթով, նա դրում է. Կատկովը «սաստիկ երկյուղ ունի հայերից, վրացիներից, թաթարներից՝ մի գուցե յոբա մի օր բարձրացնեն յուրանց ազատ թագավորութիւն որոշ. ողորմելի՛ն շգիտեր, որ և՛ ինչ ալ տգետ և թույլ ազգերին թագավորութիւն ևս բաշխեն, ինքյանք պիտի իսկույն հրաժարվին դոցանից, կամ եթէ հիմարութիւնը հանձն առնուին, ինքյանք պիտի միմյանց միմեկին, ինքյանք յուրանց գազանական զենքով և անմիաբանութիւնը կործանեն յուրանց անձը: Այո՛, շատ հեշտ բան է թագավորութիւն տնտեսել առանց նյութական, բարոյական և մտավորական կրթութեան⁷:

Անդրադառնանք Ս. Դարոնյանի վարկածի հիմնավորմանը:

Ս. Դարոնյանը Հակոբ Սերոբյանցին չի համարում հոգովածի հեղինակ, որովհետև, ինչպես հաստատում են փաստերը, Նազարյանի մտերիմը առհասարակ չի աշխատակցել «Հյուսիսափայլին», իսկ ահա Քյուրթունջի Հակոբ Սերոբյանցը, գրում է նա, բոլորովին այլ անձնավորութիւն է. «թաշաւտեղյակ «Հյուսիսափայլի» գործերին»: Մենք արդեն հայտնեցինք մեր կարծիքը Հակոբ Սերոբյանցի անունը նազարյանի կողմից օգտագործելու շարժառիթների մասին:

Այնուհետև նա գրում է, որ հոգովածում Ֆրանկլին անվան հիշատակութիւնը պատահական չէ, բանի որ Վ. Նալբանդյանը մի անգամ չէ դիմել նրա հեղինակութեանը⁸: Սակայն բանն այն է, որ Նալբանդյանից առաջ, դեռևս «Հանդես» նոր հայախոսութեան գրքում նազարյանը մի ծավալուն ակնարկ է նվիրել Ֆրանկլինին⁹:

Իբրև Նալբանդյանին հատուկ «ոճական հնարանք», Ս. Դարոնյանը հիշատակում է նամակագրի այն խոսքերը, թե խմբագիրը «կօզնե նորան, ուղղելով և լրացուցանելով նոքա անբաւական խոսքի բերութիւնը» (ընդգծումը մերն է—Մ. Մ.): Նման արտահայտութիւն Ս. Դարոնյանը նկատել է նաև Կ. Խաչատուրյանի և Ա. Ա. Ե.-ի նամակներում: Այժմ ևս Նալբանդյան-Սերոբյանցը արտահայտմանից ուղարկելով այդ նամակը, շարունակում է Ս. Դարոնյանը, «հույս ունեւ, որ Ս. Նազարյանը կլրացնի իր գրածը, որը և արվել է»¹⁰:

Ս. Դարոնյանը հիշյալ նամակներում իրավացիորեն նկատել է սեփական գրագիտութեան նկատմամբ նամակագիրների դրսևորած անվստահութեան երանգը: Սակայն մենք այլ կերպ ենք բացատրում այդ երևույթը: Մեր կարծիքով «Հյուսիսափայլի» խմբագրատանը «սարքվող» թղթակցութիւններում այդ արտահայտութիւններն ընդգծված ձևով ավելացվում էին՝ թղթակիցներին ժողովրդական շերտերի հետ կապելու միտումով:

Ս. Դարոնյանը այնուհետև փորձում է Սերոբյանցի հոգովածը կապել Նալբանդյանի «երկու տող» ուսմանի, Ա. Ա. Ե. ստորագրութիւնը կրող՝ «նամակ կոմ» էմանուելին՝ հոգովածի, ինչպես և «հիշատակարանի» հետ, ասելով, թե այդ գործերի մեջ առկա է լույսի և խավարի սիմվոլիկան: Հնդհանուր առմամբ այդ սիմվոլիկան հատուկ է բոլոր լուսավորիչների գործերին, բայց հետեւենք Ս. Դարոնյանի մտքերին: Պարզվում է, որ Քյուրթունջի Հակոբ Սերոբյանցի հոգովածի հիմնական գաղափարը խորհրդանշում է լուստեւ հասկացողութիւնը, որը նա կապում է Իսրայելի անվան հետ, այն վերծանելով և՛ իբրև Մարա-Արամ, և՛ իբրև Բարադամ՝ զամբար (լապտեր): Այս դատողութեանը հետևում են Ա. Ա. Ե.-ի նամակից և «Երկու տողից» քաղված

⁵ «Հյուսիսափայլ», 1861, № 6, էջ 493—494:

⁶ Այս հարցի հանգամանալից լուսաբանութիւնը տե՛ս Ա շ ո տ 2 ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, Երևան, 1956, էջ 97—100:

⁷ Ս տ. Ն ա զ ա ղ յ ա ն, Նամականի, էջ 275:

⁸ ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտութիւններ», 1985, № 3, էջ 56:

⁹ Ս տ. Ն ա զ ա ղ յ ա ն, Բնիման Ֆրանկլին («Հանդես» նոր հայախոսութեան, երկրորդ մաս, Մոսկվա, 1857, էջ 469—481):

¹⁰ ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտութիւններ», 1985, № 3, էջ 56:

և ոչ միշտ ճիշտ ընթերցված մի քանի արտահայտություն, որոնք համադրվում են Սերոբյանցի հոդվածի համապատասխան բառերի հետ: Ի դեպ այս հատվածի մտքերի անհասկանալի խառնաշփոթությունը հաջորդում է մի առավել անհասկանալի հետևություն. «Ահա այստեղից,— դրում է Ս. Դարոնյանը,— Սերոբյանցի մարտյան «նամակում» նրեան է գալիս «թշվառականի լուսառու չորագը ձեռին» «ղամբարի» այլաբանական կերպարը»¹¹:

Մեր կարծիքով անընդունելի է բանասիրական այսօրինակ. պատասխանատու քննությունը կառուցել առանձին բառերի նմանության կամ թեկուզ կրկնության հիմքի վրա: Դրանից բխող հետևությունները շեն կտրող համոզիչ լինել, եթե մանավանդ հստակություն չկա շարադրանքում, իրականում ի՞նչ լապտերի, ի՞նչ թշվառականի, ի՞նչ խավարի մասին է խոսքը:

Սերոբյանցն իր հոդվածում ընդգծում է, որ հայոց ազգը ցեխի և ապականության մեջ է, ուստի հայ խմբագիրները «ցավում են, գոռում են, այրվում են, որ մեր ազգը քնած է, քնած է խոր քնով, չէ կամենում զարթնել»: Այնուհետև, որպեսզի ընթերցողներն ավելի լավ պատկերացնեն իրավիճակը, Բարազամի խոսքերով նկարագրում է այն. «Վա՛յ մեղ, մեք ևս կարծում ենք, թե մարդ ենք ե մարգու կարգում ենք. աշխարհը ազատության լուսի տակ է ման գալիս, մեք թանձր խավար գիշերի ցեխերում թավալվում ենք, չենք իմանում մեր արածը, իրենք քարշելով ու ձգձգելով, մինը մյուսին կոխ տալով, որը այստեղ, որը այնտեղ անելանելի սոգիտության փոսերի մեջ ընկած, շվարած մնացել ենք»¹², Ստ. Նազարյանը, որն իր հրապարակախոսական գործունեության առաջին քալիքներից իսկ խոսում էր հայերի հետամնացության մասին, ընդգծում հասարակական շահախնդրությունների բացակայությունը նրանց առօրյայում, այս հոդվածում ստեղծել է «խավարի թագավորության» մի շատ արտահայտիչ պատկեր: Այստեղ, անգամ այն դեպքում, երբ գրսի լուսավոր աշխարհներից եկած մեկը ճրագ է տալիս խավար մղձավանջում տառապողներից մի թշվառի, որ նա լուսավորի յուրախնների ուղին՝ դեպի նոր կյանք, շքեղաստի արարածները հանգցնում են ճրագը, իսկ այն կրող թշվառականին սպանում: Սրան հետևում է հզրակացությունը. մարդկանց «արգելողը այս խավար բանտի մեջ, նույն իսկ մարդիկն են, որ դուք պահապան ու առաջնորդ եք կարգել ձեր վերա»¹³:

1859 թ. Պետերբուրգում տպագրվում է Ա. Օստրովսկու դրամատիկական երկերի երկհատորյակը: Նույն թվականին «Սովրեմեննիկ» 7 և 9 գրքերում հրապարակվում է Դոբրոլյուբովի «խավարի թագավորություն» հոդվածը: Մեր խորին համոզմունքով Նազարյանը մեծապես ծանոթ էր այդ հոդվածին, կրել է դրա ազդեցությունը և այդ ոգով էլ ներկայացրել հայ իրականության «սոգիտության խավարի մեջ» կամ «խավար բանտի մեջ» հանդի «խավարի որդիներին»: Մեր ենթադրության համար հիմք է ծառայում «եռասակցություն...» հոդվածի համապատասխան հանդիսի և «խավարի թագավորություն» հոդվածի 2-րդ գլխի առաջին էջերի համեմատությունը¹⁴: Նազարյանը «եռասակցություն...» հոդվածով արձագանքում էր ժամանակի ռուսական լազնագույն հրապարակախոսական հոդվածին և փորձում ոչ միայն պատկերել հայության մտավոր ու բարոյական ամուլ վիճակը, այլև հասարակական ակտիվ գործունեության կոչել նրան: Այսպիսին է իրողությունը: Ինչպես Նազարյանի ողջ հրապարակախոսության, այնպես էլ թյուրքությունի շակորի «եռասակցություն...» հոդվածում արտահայտվել են հայ խոշոր լուսավորչի և՛ առաջադիմական-լուսավորական գաղափարները, և՛ շափավոր լիբերալի նրա հավատամքը: Նազարյանը մեկ անգամ չէ, որ դիմել է «Սովրեմեննիկ» ամսագրին և «Հյուսիսսփայլում» արտատպել այդ ամսագրից կատարված մի շարք թարգմանություններ: Իր այլ հոդվածներում նա խոսում է «խավարի թագավորության» և դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին:

Այն, որ Նազարյանը հստակորեն գիտակցում էր 1860-ական թվականների ռուսական առաջադիմական մամուլի մարտական, անգամ վերափոխիչ դերը, նա մեկ անգամ չէ, որ արտահայտել է իր հոդվածներում և նամակներում: Հիշենք այդ փաստերից մեկը: Ի պատասխան Մատթեոս կաթողիկոսից ստացած կշտամբական կոնդակի, Նազարյանը 21/12—1860 թվակիր մի նամակով պաշտպանվում է ռեակցիոներների շարամիտ մեղադրանքներից և միաժամանակ կաթողիկոսին ծանոթացնում «Հյուսիսսփայլի» ուղղության հետ: Այս առիթով նա հիշում է

¹¹ Նույն տեղում, էջ 57:

¹² «Հյուսիսսփայլ», 1861, № 6, էջ 489:

¹³ Նույն տեղում, էջ 491:

¹⁴ Н. А. Добролюбов, Собрание сочинений в трех томах, т. 2, М., 1952, с. 177—180.

ուսական մամուլի փորձը, «...Ջայս ճանապարհ՝ ընթանայ,— գրում է նա,— այժմոյս Ռուսաստան մեր՝ հարկաւոր տեսակ տեսակ օրագիրք ամենայն համարձակախօսութեամբ քննելով և ի լուր ժողովրդեան քարոզելով, ոչ թէ միայն զազգային պակասաւորութիւնս, այլև զթերութիւնս նոյն իսկ քաղաքական կարգաց և օրինաց. զայս ճանապարհ պարտ է զնալ և սիրելի հայրենակցաց մերոց, եթէ չկամինք դատապարտել զնոսա ի մշտնջենաւորն յետնութիւն ի միջի աղգացա՛ն¹⁵։

Թյությունջի Հակոբի հոգվածում նույնպես ուշագրավ է առաջավոր մամուլին տրված գնահատականը։ Մուսավորյալ ազգերի մեջ,—գրում է հոգվածագիրը,—օրագիրը լինում է հասարակաց կարծիքի աղատ հրապարակախոս բերան, քարոզելով ժողովրդի մեջ... հասարակութեան բանաճիւտ մարգերի հայացքը և դատողութիւնը բոլոր խնդիրների վերաձև¹⁶։ Նա մամուլի սուրբ կոչումն է համարում լինել ազգերի գրավոր ուսուցիչը, ճշմարտութեան ջատագովը և այլն։ Ի դեպ, այսպիսի զուգահեռները շատ են՝ Թյությունջի Հակոբի «Խոսակցութիւն...» հոգվածի¹⁷ և Նազարյանի այլևայլ հոգվածների միջև, որոնք նույնպես ամրապնդում են մեր վարկածը՝ Նազարյանի հեղինակ լինելու վերաբերյալ։ Հիշենք դրանցից մի քանիսը. 1. «Խոսակցութիւն...» հոգվածում բնութագրվում է թագավորութիւն հասկացութիւնը (էջ 494)։ Այդ միտքը նույն ձևակերպումն ունի և «Հայերի կոչումը մարդկութեան մեջ» հոգվածում («Հյուսիսսփայլ», 1859, № 1, էջ 6)։ 2. Հոգվածում առաջարկ է արվում կազմել ընկերութիւններ (կովկասյան ընկերութեան կենտրոնը համարելով Թիֆլիսը), որոնք դառնան տեղի հայութեան բարոյական և նյութական խնդիրներով (էջ 499)։ Այդ միտքը լայնորեն արձարծված է «Առաջարկութիւն մի ընդհանուր հայկական ընկերութիւն Ռուսաստանի մեջ...» հոգվածում («Հյուսիսսփայլ», 1862, № 7, էջ 43—53), ինչպես և «Հայերի կոչումը մարդկութեան մեջ» հոգվածում («Հյուսիսսփայլ», 1859, № 1, էջ 12—13)։ 3. «Խոսակցութիւն...» հեղինակը խորին սրտացավութեամբ քննութեան է առնում հայերին ինքնաճանաչութեան հասցնելու խնդիրը (էջ 493)։ Այդ միտքը գրեթե նույնութեամբ արձարծվում է Նազարյանի նամակում՝ ուղղված Կ.Մ.-ին («Հյուսիսսփայլ», 1859, № 11, էջ 809), ինչպես և հետևյալ հոգվածներում. ա) «Հայերի կոչումը մարդկութեան մեջ» («Հյուսիսսփայլ», 1859, № 1, էջ 2)։ բ) «Նոր տարու մտածութիւնը» («Հյուսիսսփայլ», 1860, № 1, էջ 9)։ 4. «Խոսակցութիւն» հոգվածին կից հոգվածագրի նամակում խոսվում է հայերի նյութապաշտութեան մասին. «...այսօր արծաթ, էգուց արծաթ, մյուս օրը արծաթ, և դարձյալ արծաթ ու անվերջ արծաթ աղաղակելով կանցունեն յուրանց օրերը» (էջ 483)։ Դորպատի ուսանողներին ուղղած նամակում Նազարյանը, գանգատվելով թիֆլիսեցիներից, որոնք չեն կամենում օգնել «Հյուսիսսփայլի» հրատարակութեանը և թողնում են, որ առաքինութիւնը ոչնչանա իր խանձարութեամբ, գրում է. «...որովհետև հարկավոր չէ առաքինութիւնը, այլ միայն արծաթ, կրկին արծաթ, և դարձյալ արծաթ» («Նամականի», էջ 190)։ 5. Ազգային մարմնի ցավերը և խոցերը հրապարակելու անհրաժեշտութեան մասին խոսվում է «Խոսակցութիւն...» հոգվածին կից նամակում (էջ 486)։ Այդ միտքն արտահայտված է Մատթեոս կաթողիկոսին ուղղված՝ Նազարյանի 21/12—1860 թվակիր նամակում («Նամականի», էջ 239), ինչպես և «Հայերի կոչումը մարդկութեան մեջ» հոգվածում («Հյուսիսսփայլ», 1859, № 1, էջ 12)։ 6. «Խոսակցութիւն» հոգվածին կից՝ Թյությունջի Հակոբի նամակում նշված է, թե հայերի անընթերցասիրութեան պայմաններում սխալ գաղափար է այն, թե ազգը կարելի է լուր աղարավոր, մահանման թրմութեանից շարժել մատենագրութեամբ, ինչպես և անհնարին է համարվում «մի օրագրի հառաջադիմութիւն այն ազգի մեջ, ուր չկան ընթերցողք, չկան հասկացողք» (էջ 484)։ Այս հետեւութիւնը բառացի, ամենայն գաղութեամբ կրկնվում է «Հետևյալ հոգվածներում. «Նոր տարու մտածութիւնը» («Հյուսիսսփայլ», 1860, № 1, էջ 9), «Հայտարարութիւն» («Հյուսիսսփայլ», 1861, № 3, էջ 252), «Ծանուցում» («Հյուսիսսփայլ», 1862, № 10, էջ 196) և Ստ. Նազարյանի՝ 17/4—1861 թվակիր նամակում՝ ուղղված Հ. Սայաթնովյանին («Նամականի», էջ 243, 244)։

Թյությունջի Հակոբ Սեբերյանցի 2-րդ հոգվածը տպագրվել է «Հյուսիսսփայլի» 1861 թ. 9-րդ համարում, այն ժամանակ, երբ Նալբանդյանը կալկաթայից վերադարձի ճանապարհին էր (նա կալկաթայից դուրս էր եկել սեպտեմբերի 27-ին)։ Նամակի գրութեան շարժառիթը հետևյալն էր. 1861 թ. «Հյուսիսսփայլի» 3-րդ համարում՝ Հակոբ Ալիշանյանց ստորագրութեամբ

¹⁵ Ստ. Նազարյան, Նամականի, էջ 239։

¹⁶ «Հյուսիսսփայլ», 1861, № 6, էջ 495։

¹⁷ Նույն տեղում, էջ 482—499։

տպագրվում է բանավիճային մի հոգված՝ ուղղված «Կոռնկ հայոց աշխարհին» ամսագրի տեսարան Գարեգին Մուրադյանի դեմ, որը քննադատել էր Նազարյանի «Մենդելսոն, Լեսսինգ և լավատեր» հոգվածը։ Ինչպես պարզվում է Քաղերոնու հուշերից, այդ ստորագրությամբ հանդես էր եկել Մոսկվայի համալսարանի ուսանող, «Հյուսիսսփայլի» թղթակից Մարտիրոս Սիմոնյանը։

«Ճոռաբաղ» 1861 թ. հունիսի 3-ի և 15-ի իՖ և ԻԴ համարներում Չերեքյանը հրապարակում է մի պատասխան հոգված, որում հայտնելով, թե Հ. Ալիշանյանց անունը մտացածին է, խոսքն ըստ էության ուղղում է Նազարյանին¹⁸։ Չերեքյանն այդ հոգվածում եկեղեցական ղեկավարների դիրքերից չախշախում է եկեղեցու «հեթոմի»՝ Նազարյանական պահանջը և միաժամանակ փորձում կործանել մի հարվածով ձախողել Մոսկվայում մասնավոր դպրոց բացելու նրա ծրագիրը։ Նազարյանի հիմնադրելիք դպրոցը նա համարում է բողոքական խորամանկություն՝ պատրաստված որոգայթ, որով Նազարյանը, գրում է նա, իբր օր գիշեր հայ մանուկներին պետք է բարոյի «լուստերական կրոնի ուսումն»՝ լուսավորության անունով, պետք է ցանկանա «հեթոմացիայի» սերմերը մատուղ սրտերի մեջ¹⁹։ Վերջում խոսքն ուղղվելով կաթողիկոսին, Չերեքյանը նրանից խնդրում է հայոց եկեղեցին փրկել Նազարյանից։ Հարվածը նենգ էր և հղի ամենաժանր հետևանքներով, Նազարյանն իսկույն պատասխանում է այդ հոգվածին²⁰ և միաժամանակ իր ելույթն առավել նպատակաույց դարձնելու համար իբրև ժողովրդական հատվածների վրդովմունքի արտահայտություն՝ կազմակերպում է Հակոբ Սերոբյանցի երկրորդ նամակը՝ «Առ հրատարակողը»²¹։ Ինչպես ասացինք նախընթաց հոգվածի վերաբերյալ, Թյուրքունջի Հակոբ Սերոբյանցի երկրորդ նամակի հեղինակը նույնպես համարում ենք Ստ. Նազարյանին։

Նամակի առաջին բաժինը ուժեղ տրամաբանությամբ գրված խոսք է՝ հայ հասարակական կյանքում ստեղծված իրավիճակի և Չերեքյանին հրապարակավ պատասխանելու անհրաժեշտության մասին (մի բան, որ հապաղում էին անել «հարգելի գիտնականները» և «ճշմարտասեր ուսումնականները»)։ Երկրորդ բաժինը կազմված է հինգ առանձին հարցերի ձևով և ուղղակիորեն առնչվում է Չերեքյանի հարցադրումների հետ։ Առաջին երեք կետերում հոգվածագիրը կշռամբում է Չերեքյանին՝ հիմնական խնդիրը թողած «Հյուսիսսփայլի» աշխատակիցներին հայտնելու և կամ գործի արժանիքների մասին խոսելու փոխարեն հոգվածագրի ինքնության շուրջ վարիվորո գատողություններ անելու համար։ Այստեղ նամակի հեղինակը հանգում է այն հետևության, որ նրա հոգվածները «բոլորը անձնական բաներ են և անձնական վրձնախնդրության պղտոր գործ»։

Թյուրքունջի Հակոբի նամակի բուն խնդիրը, սակայն, ամփոփված է նրա 4-րդ և 5-րդ հարցադրումներում։ Այսպես, նա հերքում է Չերեքյանի այն միտքը, թե ժողովուրդը ոչինչ չի հասկանում։ Մենք նույնպես կարգում ենք, գրում է Թյուրքունջի Հակոբը, կարգում ենք ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն և տեղյակ ենք «ռուսաց կրթյալ հասարակության» արտահայտած մտքերին։ Հոգվածագիրն այնուհետև Չերեքյանին խորհուրդ է տալիս «այժմյան ռուսաց օրագիրները փոքրիչատե կարգալ ճշմարիտ սրտով և խղճով և համեմատել պ. Նազարյանցի գրվածներին և գաղափարների հետ և տեսանել, արդյոք սոքա համաձայն են նոցա հետ, թե ոչ»²²։ Նազարյանի հայացքների համար միանգամայն բնորոշ հարցադրում է նամակի այն հատվածը, որտեղ ասվում է. «Դուք ինքներդ լինելով մեր ազատամիտ քննողական ու հասկացողական օրերի կարգից ամենեկին դուրս մարդ, դուք ինքներդ մեր ժամանակի նոր լուսավորությունից ետ մնացած, կամիք նույնպես հայոց ազգը դուրս հանել այժմյան «լուսավոր ժամանակի շրջանից և տանել կոխել այն հին միջնադարյան խավարի ապականության մեջ»²³։ Նազարյանի հոգված-

¹⁸ Այս հոգվածը կրում էր հետևյալ վերնագիրը. «Մեկնություն մեկնութեան, որ տամ է նազարյանցը «Հյուսիսսփայլի» 3 ամսատետրակումը Ալիշանյանցի անունով լուր սմբյալ տարի. գրած հայոց եկեղեցու ղեկավարին, 10 ամսատետրակումը»։

¹⁹ «Ճոռաբաղ», 1861, № ԻԴ, էջ 393։

²⁰ «Ստեփանոս Նազարյանցի մի քանի խոսք առ Հովսեփ Չերեքյանցը, և հրապարակական նամակ առ պատվելի հայոց ազգը» («Հյուսիսսփայլ», 1861, № 9, էջ 234—241)։

²¹ «Հյուսիսսփայլ», 1861, № 9, էջ 242—250։

²² Նույն տեղում, էջ 247։

²³ Նույն տեղում։

ներին հարազատ ոճով են դրված և այն տողերը (դրանք, ի դեպ, կրկնվում են նրա մի շարք հոգվածներում), թե «ազատախորհուրդ, բարեմիտ» թազավորի կամքով թույլ է տրված, որ «եղբորսական լուսավորության և գիտության աղբյուրը օր է օր առավել առատ բխե և զովացնե հոգիքը Ուսաստանի մեջ»²⁴։

1861 թ. հուլիսին, երբ դրվում էր այս նամակը, թեև Նազարյանն արդեն դիտեր «Հյուսիս-սփայլը» դադարեցնել տալու վերաբերյալ Սինդիկատի հունիսի 12-ի որոշման մասին, այնուամենայնիվ 5-րդ կետում դիվանագիտական ոճով սիրաշահում է կաթողիկոսին, ձգտելով փոխել նրա վերաբերմունքը թե՛ իր աշխատանքների, և թե՛ առհասարակ հայ գործիչների լուսավորական ձեռնարկումների նկատմամբ։

Այսպիսով, մենք կարծում ենք, որ Թյուքյունջի Հակոբի նամակում արտահայտվել են ևս երեք իրադրության մեջ ծագած հրատապ մի քանի հարցեր, որոնց և շտապով պատասխանել է Նազարյանը։

Միջայլև Նալբանդյանը չէր կարող լինել այս նամակի հեղինակը, հենց միայն այն պատճառով, որ անտեղյակ էր այն իրադարձություններին, որոնց նվիրված է նամակը։ Բանն այն է, որ Չերքեզյանի հոգվածը, որին պատասխանում է Թյուքյունջի Հակոբը, տպագրվել է «Ծոռաքաղի» հունիսյան համարում, երբ Նալբանդյանը գտնվում էր Կալկաթայում։

Սեզ համար պակաս կարևոր չէ նաև Չերքեզյանի կարծիքը նամակի հեղինակի մասին։ Նա Սադա Ալեքսանդրյանցին և Թյուքյունջի Հակոբին համարում է իրական, բայց կրթություն չունեցող մարդիկ, որոնք, ըստ նրա, հեգելով կարող են խոսել մատենագրության և գրականության մասին, ինչ վերաբերում է սույն նամակին, ապա Չերքեզյանը, թերևս ոչ առանց հիմքի, նկատում է, որ Թյուքյունջի Հակոբը գործնականորեն չէր կարող իր նամակում կրկնել Նազարյանի «Հրապարակական նամակի» թեզերը, քանի որ այդ երկու նամակները տպագրվել են ամսագրի միևնույն համարում։ Այդ նամակը նա համարում է Նազարյանի կողմից նախապես գրված, իրեն իր ելույթի արձագանքը²⁵։

Ծանոթանանք Ս. Դարոնյանի դիտողություններին։

Ս. Դարոնյանը նշում է, որ Նալբանդյանն այս նամակը գրել է «Երկու տողի» հետ միաժամանակ, հաշվի առնելով, որ «Երկու տողը» չէր կարող հասնել արևելահայ ընթերցողներին։ Դարոնյանն ավելացնում է նաև, որ Նալբանդյանն այս նամակում ևս պահպանում է իր՝ միամիտ մարդ լինելու դիմակը (այսինքն՝ «Քյուրյունջի» ստորագրությունը), «քանի որ հակառակ դեպքում նա իրեն կմատնեք»²⁶։ Հարց է ծագում. այս նամակի հեղինակն ի՞նչ «վտանգավոր» մտքեր էր հայտնում, որ ստիպված լիներ դիմելու կոնսպիրացիայի Ավելորդ շնչք համարում հիշել, որ ժամանակին հայ ընթերցողներին քաջ հայտնի էր «Կոմս Էմմանուել» ծածկանվան գաղտնիքը, բայց այդ հանգամանքը Նալբանդյանին չէր մղում գաղտնապահության, թեև «Հիշատակարանում» նա չատ ավելի ծանրակշիռ մտքեր էր արծարծում։

Ս. Դարոնյանը այն միտքն է հայտնում, որ «Հյուսիսսփայլի» գլխին կախված վտանգի ժամանակ Նազարյանին, ինչպես միշտ, «այն փոքր օգնության ձեռք մեկնեց Մ. Նալբանդյանը, ուղարկելով իր, այսինքն՝ Թյուքյունջի Հակոբի «Նամակը»։ Կարծում ենք, վերը բերված փաստերը խոսում են դրա անհնարինության մասին։ Ավելին, ծանոթությունը խնդրո առարկա «Նամակի», Նազարյանի «Մի քանի խոսք առ Հովսեփ Չերքեզյանցը...» հոգվածի և «Երկու տող» պամֆլետի հետ մեզ բերում է հակառակ հետևության։ Մեր կարծիքով ո՛չ թե Նալբանդյանն է արձագանքել մոսկովյան լուրերին, գրելով Թյուքյունջի Հակոբի նամակը, այլ Նազարյանն է «Երկու տող» պամֆլետով ոգևորված՝ դրել և՛ իր «Մի քանի խոսքը...», և՛ «Հյուսիսսփայլի» միևնույն համարում տպագրված Թյուքյունջի Հակոբի «Նամակը»։ Եվ ահա թե ինչպես։ Քանի որ Նալբանդյանը «Երկու տողում» մեկնաբանում, հիմնավորում և առավել մեծ ուժով է բարձրացնում «Հյուսիսսփայլի» պահանջած եկեղեցու ունեցողի կարևորության հարցը, միանգամայն տրամաբանական է, որ նա իր պամֆլետն ուղարկեր Նազարյանին՝ այն ճանապարհով, ինչպես Ռուսաստանում ստացվում էին Սեվասթյանի «Մեղուի» համարները։ Մեր կարծիքով, ծանոթանալով «Երկու տող» պամֆլետին (որը, իսկապես, «այն ավիք» կարող էր ուղարկել Ս. Նալբանդյանը), Ստ. Նազարյանը ոգևորվել է, նոր մղումներ ստացել և դրա ազդեցությամբ գրել Չերքեզյանին ուղղված հրապարակական նամակը, լավագույններից մեկը՝ իր հոգված-

²⁴ Նույն տեղում։

²⁵ «Մասյաց աղավնի», 1861, № 21, էջ 249։

²⁶ ՉՍՍՀ ԳԱ «Երաբեր հասարակական գիտություններ», 1965, № 3, էջ 58։

ներից²⁷։ Այդ նամակի որոշ հատվածներում բացահայտորեն երևում են նալրանդյանի ոգին, հղոր տրամաբանությամբ հակառակորդին շախչախելու նրա արտահայտչաձևերը։ «Թյուրյունչի Հակոբի» ստորագրությամբ կրող հոդվածը նազարյանը գրել է իբրև լրացում՝ իր «Մի քանի խոսքին...»։

Մանթանանք այդ հատվածներին։

Նալրանդյան. «Պարոնի [Զամուռյանի] վարիվերո աղճատաբանությունը ստոր են ա-մենայն տեսակ քննութենից» (Մ. Ն ա լ Ր ա ն դ յ ա ն, ԵԺ, հ. 4, Երևան, 1983, էջ 10)։

Նալրանդյան. «Ձեր անծայր ու անվերջ աղճատաբանությունը կարող չեն մի բուսի ևս խախ-տել իմ անձնահարգության հավասարակշիռը» («Հյուսիսսփայլ», 1861, № 9, էջ 235)։

Նալրանդյան. «Պարոն Զամուռյանի և մեր գրվածներից պարզ երևում է, որ մեր երկուքի ճանապարհը այլ է բոլորովին, և սոքա այնպիսի ճանապարհներ են, որ ոչ ոք չի հասնում են միմյանց» (նույն տեղում, էջ 17)։

Նազարյան. «Պարոն եմ ասել ձեզ, որ իմ ու ձեր մեջ չկա ոչինչ հասարակաց բան. մեր հա-յացքը այնքան ներհակ ու հեռի են միմյանցից, որքան արևելք արեմտից։ Իմ ճանապարհս հա-յում է դեպի հառաչ, ձերը դեպի ետ։ ...Ուրեմն մեք կարող չենք ոչ ընկեր լինել միմյանց և ոչ ճանապարհակից» (նույն տեղում, էջ 235)։

Նալրանդյան. «Ահավասիկ մեք կանգնած ենք այժմ, բաց հրապարակի վերա...» (նույն տեղում, էջ 18)։

Նազարյան. «Հայեր, մեք կանգնած ենք այսօր Ձեր դատաստանի հրապարակի մեջ և կա-միք լսել Ձեր վճռական դատակնիքը» (նույն տեղում, էջ 238)։

Նալրանդյան. «Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջ, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով՝ և արյունով, եթե մի օր արժանի լի-նինք դենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր ար-յունով» (նույն տեղում, էջ 18—19)։

Նազարյան. «...հավատացած կացեք, որ նազարյանցը, որ այսքան երկար տարիք կա-րողացել է ապրել յուր սուրբ գաղափարների համար, այժմ ևս կարող է քաջությամբ մեռանել այդ գաղափարների համար, արյունով կնքել յուր սրտի վկայությունը» (նույն տեղում, էջ 239)։

Ինչ վերաբերում է Թյուրյունչի Հակոբի հոդվածից բերված «հայհոյությունը», «ճիզվիտ», «գոթական» և այլ բառերին, որոնք Գարոնյանը համարում է նալրանդյանի սատիրային հա-տուկ բառեր, ապա պետք է ասել, որ դրանք նույնքան էլ հատուկ են նազարյանի և «Հյուսիսս-փայլի» թղթակիցներին։ Այս առումով կուզենայինք ավելացնել, որ շնայած բա-ռերի կրկնություններին, մի բան, որ միանգամայն բնական է, նալրանդյանն ու նազարյանը ռենին խոսքի իրենց ինքնատիպ ոճը՝ նախադասության շարահյուսական կառուցման իրենց եղանակը, արաահայտչաձևերի սեփական կերպը, խոսքի էմոցիոնալ անկրկնելի երանգները։ Գրանցով նաև պետք է բնագրերում որոնել-գտնել և զգալ՝ հեղինակային «եսը», որի մասին շատ վաղուց է ասվել ամենքիս հայտնի այն խոսքը, թե ոճը՝ ինքը մարդն է։ Այս հար-ցում, սակայն, նալրանդյանագիտությանը պետք է օգնեն նաև մեր լեզվաբանները։

ՄԱՏՈՒՐ ԶԵԼԵՊԻ։ Այս ստորագրությամբ գրված «Նամակ առ հրատարակողը» հոդվածը տպագրվել է «Հյուսիսսփայլ» ամսագրի 1862 թ. մայիսյան համարում, Հայաստանի աշխարհա-գրական քարտեզի տպագրության վերաբերյալ նալրանդյանի «Հայտարարության» հետ միա-սին։ Ի՞նչ պարագաներում է գրվել այն։ 1862 թ. «Հյուսիսսփայլի» բաժանորդագրության գոր-ծը գրիթն ձախողված էր։ Նազարյանի նամակներից երևում է, որ նա փետրվարին դեռևս չգի-տեր, թե ամսագիրը հրատարակվելու է, թե ոչ։ Ի վերջո, մի քանի բարեկամների նյութական օժանդակությամբ ապրիլին հրատարակվում է ամսագրի առաջին համարը, բայց նախկինում ընդունված հինգի փոխարեն՝ երեք մամուլ ծավալով։ Քանի որ խմբագիրը ոչ մի հնարավորու-թյուն չուներ աշխատակիցներ պահելու, ամսագրի հրատարակության ողջ ծանրությունը նա կրում էր մենակ։ 1862 թվականին իր հետ բերում է ևս մեկ մտահոգություն։ Արդեն նախորդ հոդվածի առիթով ասացինք, որ 1861-ի ապրիլին նազարյանը տպագրել էր Մոսկվայում իր րացելիք «Գիտնական և գործական դպրոցի» հայտարարությունը։ Հակառակորդների, մասնա-վանդ Չերեզյանի շանքերով այդ ծրագիրը տապալվում է։ Թեև հոկտեմբերին նազարյանը ստացել էր պաշտոնական թույլտվությունը, բայց ծնողները նրան աջակերտ չեն վստահում։

27 «Հյուսիսսփայլ», 1861, № 9, էջ 234—241։

Հուսահատությունը կատարյալ էր, և ահա նա տպագրում է Մատուր Չելեպիի նամակը, որի հեղինակը Նազարյանը լինելու մասին ենթադրությունը կասկած չի հարուցում²⁸։ Այս հոգւածում Նազարյանն ազատություն է տալիս իր տխուր խոհերին, բոլոր դեպքերում հարցերի քննության ժամանակ պահպանելով հայ հասարակական կյանքի օրվա վիճակի քննարկման պատշաճ մակարդակը։

«Հյուսիսսփայլի» բաժանորդագրության ճգնաժամային վիճակը նա չէր համարում սոսկ մեկ ամսագրի ճակատագիր։ Նազարյանը հասարակության, մասնավորապես, երիտասարդության անտարբերության մեջ տեսնում էր հանուր ազգի մեջ ճգնաժամական կյանքի պակասություն, «ազգի մեղեկական սառնասրտություն» երևույթը՝ «դեպի որևիցե իմացական բարիք»։ Նազարյան-լուսավորիչը, որ հսկայական ներգրում ուներ 60-ական թվականների լուսավորչական շարժման վերելքի գործում, սրտի խորին ցավով էր արձանագրում հայ հասարակական կյանքում նկատվող հոգի երևույթները և իր պարտքն էր համարում զգաստացնել հայությանը նա գրում էր. յուրաքանչյուր ազգ, նրա հոգևոր և մշակութային կյանքը կենդանի է, «եթեր նա հառաչաղեն է, հառաչ է խաղում ժամանակի հետ. ապա թե ոչ, մեռած է»։ Նազարյանն ուշադրություն է հրավիրում, ահազանգում է. «Մեր հայերը կամ պիտի զարթնուն դեպի մի նոր կենդանություն, կամ պիտի մեռանին մի հավիտենական ազգային մահով. մի միջասահման բան չկա այստեղ»²⁹։

Նամակում արժարժեքներ կրկնող հիմնական խնդիրը կապված է ազգային դպրոցների հիմնադրման հետ։ Անասյանը, որ նրա մասնավոր դպրոցի ծրագիրը տապալված էր։ Ուշադրություն հրավիրելով Ղարաբաղի և Վրաստանի թեմերում ազգային դպրոցներ հաստատելու վերաբերյալ կաթողիկոսի թույլտվության վրա, Նազարյանը ողջունում է այդ իրողությունը և ներկայացնում դպրոցական մի հակիրճ, բայց շատ հիմնավոր ծրագիր։ Շատ հետաքրքրական է, անշուշտ, որ այս ծրագիրը նա հետազգում ընդլայնում և 1864 թ. «Հյուսիսսփայլի» էջերում տպագրում է օկզգային մտածությունը խորագրով։ Համեմատությունը պարզում է հիմնական ստորերի և հարցադրումների բազմաթիվ կրկնություններ։ Ուշագրավ է և այն հանգամանքը, որ հոդվածի վերջին հատվածում Մատուր Չելեպիի, մի պահ մոռանալով, որ ինքը սոսկ շարքային մի թղթակից է, խմբագրին վայել ուսուցողական ոճով խոսք է բացում իր ընթերցողների հետ³⁰։

Ս. Դարոնյանը «Մատուր Չելեպի» ծածկանվան պատկանելիությունը հիմնավորում է անհամոզելի ձևով։ Այսպես, այն միտքը, թե թղթին շորացնելու վերաբերյալ աստվածաշնչյան ասույթը Նալբանդյանն օգտագործել է իր մեկ այլ հոդվածում, ոչինչ չի ապացուցում, որովհետև Նազարյանին նույնպես մատչելի էին այդ ասույթները։ Այն դիտողությունը, թե ճիշդվիտեն բառը Նալբանդյանն է օգտագործել, դարձյալ ոչինչ չի ասում, քանի որ նույն հաճախականությամբ այդ բառն օգտագործել է և Նազարյանը. և չէր կարող ուրիշ կերպ լինել։ Զե՛ որ նրանք միևնույն ամբիոնից մի հաստատուն ծրագրով պայքարում էին ճիշդվիտենի հայ նըմանակների դեմ։ «Դժոխարմատ նախանձ» բառերը նույնպես չէին կարող միայն Նալբանդյանի մենաշնորհը լինել, մանավանդ այդ նախանձից Նազարյանը շատ ավելի դառնություններ էր տեսել և զանգատվել ավելի շատ, քան իր երիտասարդ բարեկամը։ Ինչ վերաբերում է հայերի մահվան և արթնության շուրջն արված դատողություններին, ապա հայտնի է, որ Նազարյանի լուսավորական բարոյները հիմնականում բարձրանում են փիլիսոփայական այդ ձևակերպման հիմքի վրա։

Ս. Դարոնյանը գտնում է, թե Նալբանդյանն իր մի շարք հոդվածներում օգտագործել է «ով ու՛ի ականջ լսելու, թող լսեն» և «Զայն բարբառոյ յանապատի» արտահայտությունները։ Նազարյանի հոդվածներում նույնպես այդ արտահայտություններն օգտագործված են։ Առավել լուրջ է Ս. Դարոնյանի այն դիտողությունը, թե որովհետև «նամակը» տպագրվել է Նալբանդյանի «Հայտարարության» հետ միևնույն համարում, ուրեմն Նալբանդյանը Պետերբուրգում ի վիճակի էր գրելու և Մ. Չելեպիի «նամակը»։ Այս պնդումը մենք գտնում ենք անհավանական։ Նախ, «Երկրագործության» հեղինակը, որը մի քանի օր էր, ինչ նվրդայից ժամանել էր, հագիվ թե ժամանակ ու տրամադրություն ունենար հասարակությանն զբաղեցնելու «Հյուսիսսփայլի» բաժանորդագրության և ազգային դպրոցների ծրագրերի հետ կապված հարցերով։ Այ-

²⁸ Այս ենթադրությունը, իրեն հավաստի մի իրողություն, թեև առանց հիմնավորումների, մենք հայտնել ենք 1958 թ. «Հյուսիսսփայլ» ամսագիրը աշխատության մեջ։

²⁹ «Հյուսիսսփայլ», 1862, № 5, էջ 227։

³⁰ Նույն տեղում, էջ 233—234։

նուհետև՝ Մատուր Զելեպիի ընամակում և Նազարյանի հողվածներում երեան եկած նմանություններն այնքան շատ են, որ բացառում են ամեն մի կասկած՝ «Մատուր Զելեպի» ստորագրությունը համարելու Նազարյանի գրական ծածկանունը:

Հիշենք այդ նմանություններից մի քանիսը:

Մատուր Զելեպի. «Որ ֆարրիկանտը աշխարհի երեսին կարող է յուր կապիտալը դնել մի ապրանքի պատրաստության վերա, որո համար չկա վաճառելու հրապարակ, որո խնդրողը բոլոր հասարակության միջից մի տասն, քսան, երեսուն մարդ էին. ապրանքի կարոտությունն է, խնդրողն են, գործադրողն են, որ պահպանում են մի ֆարրիկացիա և մի ֆարրիկանտ» (Հյուսիսսփայլ, 1862, № 5, էջ 228):

Նազուրյան. «Մատենագրություն առանց հոգաբարձության դրանքը տարածելու, մի անհնարին դործ է, ինչպես կարող է գործարանատերը (ֆարրիկանտը) ապրանք պատրաստել, եթե չկային վաճառականության հրապարակներ» (Կրիտիկա թափառական հրեայի, Հյուսիսսփայլ, 1858, № 10, էջ 333):

Նազուրյան. «...ֆարրիկանտը կարող էր միայն պատրաստել վաճառելի նյութեր, եթե գիտեր, թե դոքա պիտառություն գտանելու են ժողովրդի մեջ, եթե նույն իսկ ժողովրդի կարիքը քաջալերում էր ֆարրիկանտին գործ կատարել հասարակության համար:— Բայց եթե մի հասարակություն ոչինչ նյութական կարիք չունի... այդպիսի հասարակության մեջ կարող չէր լինել ոչինչ երկրագործություն, ոչինչ վաճառականություն, ոչինչ ֆարրիկացիա, ոչինչ ճարտարություն» (Նոր տարու մտածությունը, Հյուսիսսփայլ, 1860, № 1, էջ 8):

Մ. Զելեպի. «Հյուսիսսփայլի» ճառագայթները ավելի լուսապայծառ են, քան թե ասիական մարգերի թույլ և ցավագարված տեսությունը կարող էր տանել նորան» (նույն տեղում, էջ 227):

Ս. Նազուրյան. «Ցնորամիտնե՛ր, որ կարող էին մտածել, թե արեգակը պիտի արտաքսվի երկնակամարից, որովհետև նորա ճառագայթները ծակում են նոցա ցավագար ալքերը» (Հառաչարան Հյուսիսսփայլի, 1862 թվականի, Հյուսիսսփայլ, 1862, № 1, էջ 2):

Մ. Զելեպի. «Մերայինքը ներքն մեզ, որ այսպիսի սաստիկ լեզվով խոսում եմ նոցա հետ, մեղրոտ խոսքերով ամենադառն խեղդիների վերա խոսել, կարող էին միայն եզվիտները, բայց ես չեմ պատկանում դոցա կարգին» (նույն տեղում, էջ 233):

Նազուրյան. «Մեղրոտ խոսքերից, որ այդքան սիրելի էին ազգի մեջ գտանված կարճամիտների... Հյուսիսսփայլի» հրատարակողը միշտ հեռի է պահել յուր գրիչը, միտ դնելով քաղցր խոսքերի թունավոր ներգործությանը, միտ դնելով յուր ուրբ պարտականությանը դեպի յուր ազգը (Կերպարան Հյուսիսսփայլի 1858 թվականի, Հյուսիսսփայլ, 1858, № 12, էջ 529):

Մ. Զելեպի. «Արդյոք այդ ուսումնարանների պատվելի հոգաբարձուքը գիտե՞ն և ճանաչո՞ւմ են մի ազգային ուսումնարանի պիտույք, ե թե առանց դպրոցական մատենագրության, սկոյալ օրինավոր այրբենարանից մինչև գիտությունների վերին մասունքը, կարող չէ ոչինչ ուսումնարան հառաչողի լինել» (նույն տեղում, էջ 230):

Նազուրյան. «Մի ազգային, մանավանդ թե հայկական դպրոց կարող չէ ոչինչ հառաչողի միություն գործել, առանց դպրոցական գրքերի, առանց պատրաստելու աշակերտների համար ուսումնական հանգերձանք զանազան գիտությունների մասին. սկսյալ այրբենարանից մինչև փյոռական լեզուների և գիտությունների ուսումնասիրության հարկավոր գրանքը...» (Ազգային մտածությունը, Հյուսիսսփայլ, 1864, № 3, էջ 228):

Մ. Զելեպի. «Հայերը պարծենում են միայն յուրյանց նախահարց պարծանքով, ինչպես մեզ երևում է, յուրյանց, ձեռքը գոգում գրած, անմիտ անգործությունը արդարացնելու համար» (նույն տեղում, էջ 232):

Նազուրյան. «...մի՞թե դորանից հետևում է, որ և հասարակը պիտի հուսահատի, ձեռքը գոգումը դնե և բերանը բացած ասե միշտ...» (Ազգային մտածությունը, Հյուսիսսփայլ, 1863, № 12, էջ 3):

Մ. Զելեպի. «Ես միայն հաստուցանում եմ իմ խղճի պարտքը, տալով suum cuique, այսինքն ամեն միևնի յուր արժանը և պատկանելին» (նույն տեղում, էջ 229):

Նազուրյան. «Ով չգիտե այսպես մտածել, նա ոչինչ ըմբռնողություն չունի ազատության մասին, որ ամենին տալիս է յուր պատկանելին—suum cuique (Կրիտիկա թափառական հրեայի, Հյուսիսսփայլ, 1858, № 10, էջ 332)»³¹:

³¹ Ուշագրավ փաստ է այն, որ Նազուրյանի գրականագիտական երախայրիքի՝ «Ճաղագս

Մի բանի խոսք հողվածագիրների ծածկանունների մասին: Ս. Դարոնյանը հենթադրում է, որ Նալբանդյանին վերադրվող վերահիշյալ հողվածների ծածկանունները հողվածագիրն ընտրել է «Հյուսիսափայլում» 1858—1859 թթ. օգտագործած իր ծածկանունների հիման վրա: Այսպես, Մատուր Չելևիի և Պողոս Ղուկասյան անունները նա կապում է Մատուր Պողոսյան անվան հետ, իսկ Մարտիրոս Առաքելի անունը սարքված է համարում Մարտիրոս Ստոպյան և Շաքրեզ անուններից:

Մենք, սակայն, XIX դ. 60-ական թվականների բանավեճերում գրական կեղծանունների ստեղծման մեջ ինչ-որ օրինաչափություն ենք տեսնում: Վիճող կողմերը, հավանաբար, իրենց խոսքին հանդիսավորություն հաղորդելու համար ընտրում էին աստվածաշնչյան կամ գիցական անուններ: Սրինյակ՝ Կիրակոսը Հայտնավորի սրբերից է, իսկ Մարգարյանը կարող է կապվել մարգարե բառի հետ: Պողոս Ղուկասյանի անվան հիմքում կարող էին դրվել Պողոս առաքյալի և Ղուկաս ավետարանիչի անունները: Մատուր Չելևիին կարող էր ստեղծվել Աստվածատուր անունից և չելևիի թուրքերեն բառից, որը հալերին տրվող պատվանուն էր: Մսեր Մսերյանի վաճառ Արամյուն կեղծանունը, նրա իսկ խոստովանությամբ, Նահապետ Արամն էր, որը վահանով պաշտպանում էր հավատն ու եկեղեցին: Ջարմալիի Անդրեաս Պետրոսյան անունը կարող էր կազմված լինել եղբայրների Անդրեաս և Պետրոս առաքյալների անուններից: Բացառվում անունը, որ Ս. Դարոնյանը կապում է Արամ Նահապետի անվան կամ դամբար բառի հետ, կարծում ենք՝ առնչվում է այդ անվան ստուգաբանությամբ ճշտված՝ «ժողովրդի որդի» հասկացության հետ: Շմավոնը և Ղևին «Գիրք ծննդոցից» են, Հակոբի հանդուգն ու վրիժառու որդիները: Ինչ վերաբերում է Բյուրյանի Հակոբ Սերոբյանցին, ապա միանգամայն անտրամաբանական էնք գտնում, որ Նաղարյանը՝ իրեն կեղծանուն օգտագործել իր ժամանակակիցի և բանկամի անունը:

О ПСЕВДОНИМАХ М. НАЛБАНДЯНА

МАРГО МХИТАРЯН

Р е з ю м е

Ссылаясь на мнение кандидата филологических наук Ас. Асатрянца, доктор филологических наук С. Даронян («Вестник общественных наук» АН Арм.ССР, 1984, № 12, 1985, № 3) утверждает, что семь статей, опубликованных в журнале «Юсисапайл» в 1860—1862 гг. и подписанных шестью псевдонимами, принадлежат перу М. Налбандяна. Два псевдонима—Камсар Хачатурян и Мартирос Асланбек—действительно принадлежат М. Налбандяну, однако остальные четыре—Киракос Маргарян, Погос Гукасян, Тютюнджи Акоп Серобянц и Цатур Челеби принадлежат редактору журнала «Юсисапайл» Степаносу Назаряну.

Изучение материалов периодической печати этого периода показывает, что пять вышеуказанных статей являются результатом полемики, развернувшейся между Назаряном и реакционными деятелями того времени. Каждая из них написана по конкретному поводу, некоторые же статьи написаны в тот период, когда Налбандяна в России не было. Органическое сходство рассматриваемых статей с другими статьями Ст. Назаряна подтверждается и целым рядом других примеров.

Հայկական մատենագրության համա-ի թնայրի վրա Նաղարյանի կատարած փոփոխություններում ես պատահում է այդ դարձվածքը. «...տաքուք առնն զոր ինչ քաշ իրաւամբք վայել է նմա. suum cuique» (Մ. Նալբանդյան, Ելժ, հ. 2, Երևան, 1980, էջ 6):